# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ԱՊՐԻԼԻ 2025թվականի N 041-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 04-Ը ԱՊՐԻԼԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 4 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Արենի համայնքի ավագանու 04-ը ապրիլի 2025 թվականի թիվ 4 հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1. Արենի համայնքի ավագանու 04-ը ապրիլի 2025 թվականի թիվ 4 նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Արենի համայնքի ղեկավարի 2025 թվականի բյուջեի կատարման առաջին եռամսյակի հաղորդումն ի գիտություն ընդունելու մասին:

3. Արենի համայնքի ավագանու 15.01.2025 թվականի թիվ 002-Ն որոշմամբ հաստատված 2025 թվականի տարեկան բյուջեում հոդվածային վերաբաշխում կատարելու մասին:

4. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող Արթուր Սողոմոնի Սողոմոնյանին սեփականության իրավունքով պատկանող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելուն համաձայնություն տալու մասին:

5. Արենի համայնքի ավագանու 03 մարտի 2025 թվականի թիվ 027-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերը և թիվ 029-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին:

6. Արենի համայնքում Մանկական զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող «Համալիր սոցիալ-հոգեբանական աջակցություն հաշմանդամություն և

զարգացման խնդիր ունեցող երեխաներին, երիտասարդներին և նրանց ընտանիքներին» ծրագրին ներդրում կատարելուն համաձայնություն տալու մասին:

7. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքերը ուղղակի վաճառքով օտարելու մասին:

8. ՀՀ Վայոց ձոր մարզի Արենի համայնքի ենթակայության մանկապարտեզների ծառայություններից օգտվողների համար 2025թվականի համար սահմանված տեղական վճարների դրույքաչափերի նկատմամբ արտոնություններ կիրառելու մասին:

9. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող Հ-40 հանրապետական նշանակության ավտոճանապարհից դեպի ՀՀ պետական սահման տանող ճանապարհը անվանակոչելու մասին:

10. Արենի համայնքի Գնիշիկ բնակավայրի վարչական տարածքում Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից անտառհիմնաման ծրագրին համաձայնություն տալու մասին:

11. Արենի համայնքի ավագանու հերթական նիստի օր նշանակելու մասին:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՔԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ՍԱՄՎԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ԱՊՐԻԼԻ 2025թվականի N 042-Ա

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 92-րդ հոդվածի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

Արենի համայնքի ղեկավարի բյուջեի կատարման 2025 թվականի առաջին եռամսյակի հաղորդումն ընդունել ի գիտություն՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ՍԱՄՎԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված Արենի համայնքի ավագանու
04.04.2025թ.-ի թիվ 042-Ա որոշման

2025թ առաջին եռամսյակ

Եկամտային մաս. հազար դրամ

| **Եկամտատեսակ** | Նախատեսված | Կատարողական | Կատարման տոկոս |
|---|---|---|---|
| Անշարժ գույքի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար | 1698,0 | 3527,8 | 207,8 |
| Հողի վարձավճար համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար | 7727,5 | 1682,5 | 21,8 |
| Գույքահարկ | 12000,0 | 15338,4 | 127,8 |
| Տեղական տուրքեր | 5000,0 | 6690,2 | 133,8 |
| Գույքի վարձակալությունից եկամուտներ | 297,0 | 314,0 | 105,7 |
| Աղբահանության, խմելու ջրի և ոռոգման ջրի վճարներ | 3645,0 | 3079,9 | 84,5 |
| Մանկապարտեզի ծնողական վճարներ | 5402,0 | 4653,4 | 86,1 |
| Արտադպրոցական դաստիարակություն | 1000,0 | 1000,0 | 100,0 |
| **Այլ եկամուտներ**/օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ/ | 1200,0 | 1464,0 | 122,0 |
| **Ընդամենը սեփական եկամուտներ** | **37969,5** | **37750,2** | **99,4** |
| Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | 119711,3 | 119711,3 | 100,0 |
| Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ/սուբվենցիաներ/ | 133,9 | 133,9 | 100,0 |
| Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից /սուբվենցիաներ/ | | - | - |
| **Ընդամենը եկամուտներ** | **157814,7** | **157595,4** | **99,9** |
| Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր | | 353,8 | |
| ՉԱՐՏԱԴՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ /Հողի օտարումից/ՄՈՒՏՔԵՐ | 40000,0 | 37477,0 | **93,7** |

| Ծախսային մաս | Նախատեսված | Կատարողական | Կատարման տոկոս |
|---|---|---|---|
| Դրամով վճարվող աշխատավարձեր և հավելավճարներ | 45000,0 | 29719,6 | 66,0 |
| Գործուղումների և շրջագայությունների ծախսեր | 500,0 | 195,9 | 39,2 |
| Էներգետիկ ծառայություններ | 20000,0 | 18164,1 | 90,8 |
| Կապի ծառայություններ | 225,0 | 163,6 | 72,7 |
| Ապահովագրական ծախսեր | 50,0 | - | 0,0 |
| Պայմանագրային ծառայությունների և ապրանքների ձեռք բերում | 3000,0 | 2807,8 | 93,6 |
| Դրամաշնորհներ | 30000,0 | 27607,9 | 92,0 |
| Սուբսիդիաներ | 28000,0 | 26368,0 | 94,2 |
| Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ | 1000,0 | 480,0 | 48,0 |
| Այլ ծախսեր | 2000 | 1722,2 | 86,1 |
| Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում, շինարարություն | 22800,0 | 22636,8 | 99,3 |
| Նախագծահետազոտական ծախսեր | 9500,0 | 9230,0 | 97,2 |
| Մեքենաներ և սարքավորումներ, այլ հիմնական միջոցներ | 1600,0 | 1502,5 | 93,9 |
| **Ընդամենը** | **163675,0** | **140598,3** | **85,9** |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԳԵՎՈՐԳ ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ԱՊՐԻԼԻ 2025թվականի N 043-Ն

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 15.01.2025ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 002-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ 2025ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՀՈԴՎԱԾԱՅԻՆ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով և «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, հիմք ընդունելով Արենի համայնքի ղեկավարի առաջարկությունը, Արենի համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Արենի համայնքի ավագանու 15-ը հունվարի 2025 թվականի թիվ 002-Ն որոշմամբ հաստատված 2025թվականի տարեկան բյուջեում կատարվող հետևյալ փոփոխությունները և վերաբաշխումները՝

1. Արենի Այլ ոչ հարկային եկամուտներ 28 բաժնի 50 խմբի 00 դասի եկամտատեսակում ավելացնել 354 600 ՀՀ դրամ և նշված գումարն ուղղել՝

նախադպրոցական ուսուցում 09 բաժնի 01 խմբի 01 դասի 4512 /Սուբսիդիաներ ֆինանսական պետական կազմակերպություններին/ հոդվածին:

2. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ գործառնական դասակարգման 01 բաժնի 06 խմբի 01 դասի 4657 /այլ կապիտալ դրամաշնորհներ/ հոդվածից պակասեցնել 2 950 000 ՀՀ դրամ և ուղղել նույն ոլորտի 4239 /ընդհանուր բնույթի այլ ծառայություններ / հոդվածին՝ սուբվենցիոն ծրագրերով կառուցված ասֆալտապատ ճանապարհների հրատապ կարգով իրականացված գծանշման աշխատանքների գումարները վճարելու նպատակով:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՔԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ՍԱՄՎԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ԱՊՐԻԼԻ 2025թվականի N 044-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐԹՈՒՐ ՍՈՂՈՄՈՆԻ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ և ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշումը՝ Արենի համայնքի ավագանին *որոշում է.*

Տալ համաձայնություն Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող Արթուր Սողոմոնի Սողոմոնյանին սեփականության իրավունքով պատկանող 0.03718 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0265-0085, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների) հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՔԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ՍԱՄՎԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ԱՊՐԻԼԻ 2025թվականի N 045-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 03 ՄԱՐՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 027-Ա ՈՐՈՇՄԱՆ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ԿԵՏԵՐԸ ԵՎ 029-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը և Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջով, Արենի համայնքի ավագանին որոշում է՝

1. Ուժը կորցրած ճանաչել Արենի համայնքի ավագանու 03 մարտի 2025 թվականի <<Արենի համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին դրամական աջակցություն ցուցաբերելու և արվեստի դպրոցի փոխհատուցման վճարներից զիջելու մասին>> թիվ 027-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերը:

2. Ուժը կորցրած ճանաչել Արենի համայնքի ավագանու 03.03.2025թվականի <<Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրի մշակույթի տնից առանձնացված հատվածը սգո սրահի կառուցման նպատակով հատկացնելու և սրահին առանձին մուտք ապահովելու համար նախամուտք և սանհանգույց կառուցելու նպատակով գումար հատկացնելու մասին>> թիվ 029-Ա որոշումը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՔՆԱՐԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ՍԱՄՎԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ԱՊՐԻԼԻ 2025թվականի N 046-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՆԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՄԱԼԻՐ ՍՈՑԻԱԼ- ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ,ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ» ԾՐԱԳՐԻՆ ՆԵՐԴՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ 25-րդ և 42-րդ կետերի պահանջներով,

Արենի համայնքի ավագանին որոշում է՝

1. Տալ համաձայնություն Արենի համայնքում Մանկական զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող «Համալիր սոցիալ-հոգեբանական աջակցություն հաշմանդամություն և զարգացման խնդիր ունեցող երեխաներին, երիտասարդներին և նրանց ընտանիքներին» ծրագրի իրականացման նպատակով 1500004 /մեկ միլիոն հինգ հարյուր հազար չորս/ ՀՀ դրամ ներդրում կատարելուն:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՔՆԱՐԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ՍԱՄՎԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝*** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ԱՊՐԻԼԻ 2025թվականի N 047-Ա

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով, Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Արենի համայնքի Արենի բնակավայրի 31-րդ փողոց 2/3 հասցեում գտնվող 0,04565հա բնակավայրերի նշանակության հողամասը (ծածկագիրը՝ 10-008-0016-0034, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման) և օրինականացված 138,48քմ ընդհանուր մակերեսով հասարակական նշանակության շինությունները (սանհանգույց՝ 29,82քմ., խոհանոց՝ 42,26քմ., սպասարկման սրահ՝ 56,62քմ., պարիսպ՝ 3,6քմ, 7,2խմ., պարիսպ՝ 6,18քմ, 12,36խմ.) ուղղակի վաճառքով օտարել կառուցապատող Ռաֆիկ Կառլենի Սիմոնյանին:

1) Հաստատել հողամասի և շինությունների համար հաշվարկված գումարները.

ա) 0.04565ա բնակավայրերի նշանակության հողամասի համար՝ 995 823 ՀՀ դրամ,

բ) 138,48քմ ընդհանուր մակերեսով օրինականացված շինությունների համար՝ 1 506 801 ՀՀ դրամ,

2. Արենի համայնքի Արենի բնակավայրի 1-ին փողոց 23 հասցեում գտնվող 0,00285հա բնակավայրերի նշանակության հողամասը (ծածկագիրը՝ 10-008-0034-0008, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) և օրինականացված 21,9քմ ընդհանուր մակերեսով բնակելի նպատակային նշանակության շինությունը (ավտոտնակ) ուղղակի վաճառքով օտարել կառուցապատող Հրայր Սուրենի Գրիգորյանին:

1) Հաստատել հողամասի և շինությունների համար հաշվարկված գումարները.

ա) 0.00285ա բնակավայրերի նշանակության հողամասի համար՝ 34 800 ՀՀ դրամ,

բ) 21,9քմ ընդհանուր մակերեսով օրինականացված շինությունների համար՝ 79 431 ՀՀ դրամ,

3. Արենի համայնքի Ելփին բնակավայրի 6-րդ փողոց 8/1 հասցեում գտնվող 0,0669հա բնակավայրերի նշանակության հողամասը (ծածկագիրը՝10-020-0037-0012, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման) և օրինականացված 184,57քմ ընդհանուր մակերեսով հասարակական նշանակության շինությունը (հյուրատուն) ուղղակի վաճառքով օտարել կառուցապատող Մուրադ Մարութի Հարությունյանին:

1) Հաստատել հողամասի և շինությունների համար հաշվարկված գումարները.

ա) 0.0669ա բնակավայրերի նշանակության հողամասի համար՝ 427 560 ՀՀ դրամ,

բ) 184,57քմ ընդհանուր մակերեսով օրինականացված շինությունների համար՝ 1 234 220 ՀՀ դրամ:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՔՆԱՐԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ՍԱՄՎԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ԱՊՐԻԼԻ 2025թվականի N 048-Ա

### ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ 2025ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> օրենքի 16-րդ հոդվածը և հարգելով Արենի համայնքի ղեկավարի առաջարկը, Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. ՀՀ Վայոց ձոր մարզի Արենի համայնքի ենթակայության մանկապարտեզների ծառայություններից օգտվողների համար 2025 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառել արտոնություններ՝ տեղական վճարի նկատմամբ զրոյական դրույքաչափով:

2. Սույն որոշմամբ սահմանված արտոնությունները տարածվում են 2025թվականի ապրիլի 1-ից մինչև դեկտեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածի վրա:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ՍԱՄՎԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ԱՊՐԻԼԻ 2025թվականի N 049-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ Հ-40 ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԻՑ ԴԵՊԻ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԸ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով, Արենի համայնքի ավագանին որոշում է՝

Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող Հ-40 հանրապետական նշանակության ավտոճանապարհից դեպի ՀՀ պետական սահման տանող ճանապարհը անվանակոչել 46-րդ փողոց:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՔԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ՍԱՄՎԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ԱՊՐԻԼԻ 2025թվականի N 050-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՆԻՇԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՎԱՅՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ և ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՏԱՌԱՀԻՄՆՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջով, Արենի համայնքի ավագանին որոշում է՝

1. Տալ համաձայնություն, Արենի համայնքի Գնիշիկ բնակավայրի վարչական տարածքում Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից ներկայացված հողատարածքներում (կցվում է քարտեզները) հիմնել համայնքային անտառներ՝ հիմնադրամի միջոցներով:

2. Առաջարկել համայնքի ղեկավարին հիմնադրամի հետ համատեղ մշակել և կնքել համապատասխան պայմանագիր:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ՍԱՄՎԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ԱՊՐԻԼԻ 2025թվականի N 051-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 62-րդ հոդվածի պահանջով, Արենի համայնքի ավագանին որոշում է՝

Արենի համայնքի ավագանու 2025թվականի գարնանային նստաշրջանի հերթական նիստի օր նշանակել 2025թվականի մայիսի 7-ին ժամը 16:00-ին:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՔԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ՍԱՄՎԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**